ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետների՝ (ծածկագիր 3.1-1) և (ծածկագիր 3.1-2) համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար

Հայտատու՝ Արաքսի գյուղապետարան

<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

(ծածկագիր 3.1-1)

Առաջատար մասնագետը՝

- ✓ Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է դրամական միջոցների մուտքագրման, դուրս գրման, այդ թվում աշխատավարձի վճարման գործառույթներ.
- ✓ իրականացնում է գույքահարկի, հողի հարկի վարձավճարների, ինչպես նաև տեղական տուրքերի գրանցման և գանձման գործընթացը.
- ✓ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
- ✓ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
  Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ✓ Առնվազն միջնակարգ կրթություն.
- ✓ ՀՀ<<Սահմանադրության>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- ✓ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք :

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա)գրավոր դիմում հանձնաժողովի անունով՝ նշելով պաշտոնը, որին հավակնում է դիմողը.

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ ատեստատ(ներ), դիպլոմ(ներ), վկայական(ներ), աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից).

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

ե)<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> ենթակետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.

զ)մեկ լուսանկար(3x4 չափսի).

է)անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արաքսի գյուղապետարանի աշխատակազմ (հասցե ՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դրոյի փողոց, թիվ 2 շենք, էլ. հասցե՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am,հեռ.՝(098)74-75-49,(077)09-08-07) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ-ի և ՀԳՄՀ վարչություն (հասցե ՝ ք, Արմավիր 71,հեռ՝ 2-76-49, 2-07-70).ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 16^{00}՝ բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից :

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները:Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթը կկայանա 2015 թվականի մարտի 6-ին, ժամը 11^{00}-ին:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է փետրվարի 17-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

(ծածկագիր 3.1-2)

Առաջատար մասնագետը՝

- ✓ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է զորակոչի, զորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին.
- ✓ ապահովում է զինծառայողների հաշվառման փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան փաստաթղթերը.
- ✓ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակմանը.
- ✓ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

  Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

- ✓ Առնվազն միջնակարգ կրթություն.
- ✓ ՀՀ<<Սահմանադրության>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, << Զինվորական օրենսգրքի>>, <<Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- ✓ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք :

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա)գրավոր դիմում հանձնաժողովի անունով՝ նշելով պաշտոնը, որին հավակնում է դիմողը.

բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ ատեստատ(ներ), դիպլոմ(ներ), վկայական(ներ), աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից).

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

ե)<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> ենթակետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.
զ)մեկ լուսանկար(3x4 չափսի).
է)անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Արաքսի գյուղապետարանի աշխատակազմ (հասցե ՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արաքս, Դրոյի փողոց, թիվ 2 շենք, էլ. հասցե՝ araqsvagharshapat.armavir@mta.gov.am,հեռ.՝(098)74-75-49,(077)09-08-07) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ-ի և ՀԳՄՀ վարչություն (հասցե ՝ ք, Արմավիր 71,հեռ՝ 2-76-49, 2-07-70).ամեն օր ժամը 9^{00}-ից մինչև 16^{00}՝ բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից :

Ներկայացվող փաստաթղթերի պատճենների հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաև դրանց բնօրինակները:Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթը կկայանա 2015 թվականի մարտի 6-ին, ժամը 11^{00}-ին:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է փետրվարի 17-ը:

Արաքս համայնքի ղեկավար՝/ / Ա.Միքաելյան